30.12.2022

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 974-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 30-ի N 974-Ա որոշմամբ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում ստեղծվել է «ԷԿՈՍ» ազատ տնտեսական գոտին, որի մեկնարկը տրվել է 2019 թվականի հունվարին: 2018 թվականի հոկտեմբերի 18-ին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (ներկայիս՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության) և «ԷԿՈՍ» ՓԲԸ միջև կնքվել է վերոնշյալ ազատ տնտեսական գոտու կազմակերպման մասին պայմանագիրը, ինչը հնարավորություն է տալիս շահագործել վերոնշյալ ազատ տնտեսական գոտին:

ԱՏԳ կազմակերպչի կողմից 2022 թվականին ներկայացվել «ԷԿՈՍ» ազատ տնտեսական գոտու տարածքի սահմանագծի, ինչպես նաև ԱՏԳ-ում պլանավորվող գործունեության տեսակների ընդլայնման վերաբերյալ հայտ:

Հարկ է նշել, որ ԱՏԳ սահմանագիծը հաստատվել է Որոշման N 1 հավելվածով, որը մեկ անգամ (ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1805-Ա որոշում) ընդլայնվել է 13.6 հա մակերեսով:

Ներկայացված նոր հայտով «ԷԿՈՍ» ազատ տնտեսական գոտում նախատեսվում է ընդլայնել ԱՏԳ տարածքի սահմանագիծը (ևս շուրջ 48.5 հա մակերեսով) ու պլանավորվող գործունեության տեսակները, ինչը հնարավորություն կընձեռի ներգրավել ներդրումներ, խթանել մշակող արդյունաբերության, բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ստեղծված արդյունքի արտահանմանը, նպաստել տվյալ հատվածում հայկական բրենդի ճանաչմանն ու տարածմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ազատ տնտեսական գոտիների հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը դրական եզրակացություն է տալիս ներկայացված

հայտին՝ ընդլայնելու ԱՏԳ տարածքի սահմանագիծը և պլանավորվող գործունեության տեսակները:

Վ. Քերոբյան (Հանձնաժողովի նախագահ)

Ա. Եգանյան (Հանձնաժողովի քարտուղար)